

կատարեց . որովհետեւ մեր գրքերուն մէջ անոր երկու գաղաւտ կը գտնեմք : Առջի գաղաւտը մարգարէք կը նշանուէր իբրեւ աղքատ ու խոնարհ . իսկ երկրորդը՝ փառաւոր ու մեծաւայելուչ . փասն որոյ ես այլ երկու գաղաւտեան համար ինչ որ պատահեցայ սուրբ գրոց մէջ՝ հոս մէջ պիտի բերեմ : Առաջին գաղաւտեան համար կ'ըսէ Աստուած . Օգբարիայի բերանով . « Ուրախ եղիւր դուստր Սիօնի . ահա քս վարդապետդ կուգայ աղքատ , և իշոյ վերայ հեծած » (1) : Այն գաղաւտեան համար կ'ըսէ Աստուած Վրիտանոս անարգուած , ու Վանիէ՛լ սպաննած . Օգբարիա ու Վմալ՝ ծախուած , և առնք ամենքն այլ կատարեցան ինչպէս ցուցցի ու պիտի ցուցնեմ այս գրքիս մէջ : « Օ ինքք բանի տեղ չտեպեցինք , չճանցանք , ինչպէս Աստուծոյ կ'ըսէ . այլ անտես ըրինք և անորմէ աւելի դժուարեցանք » (2) : Իսկ նորա փառքն ու մեծփայլութիւնը երկրորդ գաղաւտանը յայտնի կ'ըլլայ , երբ կրակ ու բոց աւար դիմացէն կ'երթայ ու կ'այրէ կը մրկէ չորս դին եղող նորա թշնամիքը , ինչպէս որ Վաւթի և Ասայեոյ մարգարէի բերանով ըսաց Աստուած . (Սալմ. Զ. 2. 3 : Լաւ. 10. 4) : Իսկ վախճմ , Տէր իմ , չըլլայ որ Քրիստոս մահուան կրակով և ոչ ուրիշ կերպով գատելու ըլլայ զմեզ . փասն զի մեք սպաննեցինք այն մարգարէները որ նորա համար մեզ աւետիս տուին . ինչպէս Աստուած մեզի գէմ՝ Աղիա մարգարէին բերնով կը վիայէ չորրորդ

թագաւորութե՛ն գրքին մէջ (1) : Այսպէս սպաննեցինք այն արդարը , որոյ համար Աստուած անվախճան բարկութեամբ բարկացաւ մեզ : Սակայն Աստուծոյ եմք ամեն գէպքերու մէջ , թէ որ անոր յուսարու ըլլամք :

Ի յաջորդին :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ներկայ ամսոյս 2 և 8 ին երկու անգամ հացիկերութի հանդէս տեղի ունեցաւ : Առաջինը տեղւոյս Վսեմ . Լիւլա փաշայի կողմէն առ բողոր զինուորական դասա , ուր հրաւիրուած էին նաեւ Խորանայ աւագանիքն ու Վսեմ . կառավարիչ Նազիֆ փաշայն : Իսկ երկրորդը՝ որ միտալայ Ալի պէկին կողմէն տրուեցաւ , աւելի հանդիսաւոր էր և արժանի նշանակութեան : Վանզի բաց ի զօրաց գնդերէն ու զինուորական պաշտօնեաներէն՝ յատկապէս հրաւիրեալ էին նաեւ Պատրիարքուք և Հիւպատոսք : Այսու ամենայնիւ առաջինները անձամբ չընալ երթալնուն , և միտալայ Ալի պէկին հրաւերը սիրով ընդունելով , իրենց կողմէն երեք վանքերն ալ թարգմանելին խրկեցին : Հացիկերութի համար ուրուած տեղն էր Վամասկոսի կոչուած դրան կողմը հարթ գաշտակի մի մէջ վրաններու տակ՝ ուր երեւելի կոչնականայ համար երկու սեղան զարդարուած էր . առաջին սեղանոյն նախագահ էր Վսեմ . Նազիֆ փաշայն , Լիւլա փաշայն , Սեմ . Հիւպատոսք՝ իրենց մարդիկներովը և Արժ . երեք թարգմանք : Սուրբ Աթոռոյս կողմէն գնացողն էր աւագ թարգման Արժ .

(1) Ուրախ ըր յոյժ դուստր Սիօնի . քարոզեալ դուստր Նրուապէմի . ահա թագաւոր քս զայ տաքեղ , արդար և փրկիչ , նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ : Զաւա . թ . 9 :

(2) Այս վիպութիւնս չիայ մեր թարգմանութեանց մէջ : Եւ ԾԳ . 3 գլուխը . սա միայն կը գրուէ , « Դարձուցեալ զերեսս իւր անարգեցաւ , և ոչ ինչ համարեցաւ » :

(1) Այս խօսքս Դ . թագաւորութեանց մէջ չիկայ , այլ Գ . թագաւորութեանց ԺԺ գլուխ ու 10 համարին մէջ այսպէս կ'ըսէ , « Եւ զմարգարէս քս կատարեցին որով » :

և բարեջան Վերսէս վարդապետն, որ այսպիսի պարագաներու մէջ խիստ սրատուաւոր և արժանաւոր կերպով ներկայացնող է զսուրբ Միստոս և զնորին Մենն ։ Սրբաշնուածիւնք ։ Երկրորդ սեղանին նախագահ էր մեծարոյ Սիւֆիթին և քաղաքիս աւագանիքը՝ ուրիշ նշանաւոր կոչնականներով ։ Այն հայցկերութիւն համար պատրաստուած ուրիշ կերակուրներէ և անուշիղէններէ ի դատ գլխաւոր պնակներն էին 75 հատ խորոված գառ ։ Սեղանէն առաջ զօրսպետը զօրաց կրթութեան հանդէս մի ներկայացուց, որոյ մէջ այնքան ճարտարութիւն, գիւրաշարժութիւն և զինուորական կարգեր ու հնարքներ ի գործ դրին, մինչեւ անգամ զարմացը նեղ զեւրոպացիները՝ որ ներկայ էին հոն ։ Ասկէ ի վաս ուրիշ մարմնոյ վարժութեան և տեսակ տեսակ խաղեր եւս կատարուեցան ։ Սեղանի և ուրիշ ժամանակ միջոց առ միջոց ընտիր աքաղաղ եղանակներ կը հնչուէր զինուորական նուագաց ։ Այսպէս վերջացաւ սոյն ուրախութեան հանգէտը ի մեծ գոհութիւն բոլոր հրաւիրելոյց, և ի պատիւ մեծարոյ Ալի պէկին ։

— Ընցեալ ամսոյն 21 ին առ Մսուս ամս փոխեցաւ Ագիպտոսի Մաալնորդ Գեր. Գարրիէլ Ս. Ըբբեպիսկոսպետը ի խոր ծերութեան, որոյ մահը ոչ միայն իւր սիրելի ժողովուրդին, այլ և բոլոր միաբանութեանս սրտին մեծ սուգ և տրտմութիւն պատճառեց ։

Հանգուցեալ Սրբազանը գրեթէ 35 տարի չափ առաջնորդութեւն արշտօնը վարեց ։ Ինքը սուրբ Միստոս հարազատ միաբաններէն էր ։ 1832 ին երբ լուսահոգի Ալիբակոս եպիսկոպոսը սուրբ Միստոս նեղ ժամանակին Ագիպտոսի առաջնորդութենէ ետ կանչուեցաւ ուրիշ աւելի կարեւոր պաշտօն յանձնուելով իրեն, իւր տեղը

Գարրիէլ եպիսկոպոսը խրկուեցաւ որ գեռ վարդապետ էր, իբրեւ արժանաւորագոյն նոյն վիճակին առաջնորդութեանը ։ Հոն հասնելուն սկսաւ ամենայն ջանքով խնամք և հոգ տանիլ իւրեան յանձնուած ժողովրդին պիտոյիցը և սուրբ Միստոս կալուածոց ։ Իւր գլխաւոր ձեռնարկութիւններէն մէկն եղաւ սուրբ Եկեղեցւոյն շինութեանը ձեռք զարնել՝ կանխաւ հրաման խնդրելով լուսահոգի Պօղոս Պատրիարքէն, որ սուրբ Միստոս պարտուց ազատութեանը համար աղբին հաճութեամբը հոգաբարձու ընտրուած էր ։ Այլ կողմէն եկեղեցւոյն շինութեան և միւս կողմէն սուրբ Միստէն հետզհետէ խրկուած գումարներով և այն տեղ գտնուած կալուածոց վարձքերէն սուրբ Միստոս հնացեալ տուները կը նորոգէր, և նորէնոր տուներ ծախու կ'առնէր, ինչպէս նոյնը ըրած է նաեւ իւր նախորդը Ալիբակոս եպիսկոպոսը ։ Իւր գործունէութիւնը և աշխուժութիւնը և ժողովրդասէր բարքը տեսնելով նոյն ժամանակի աղբային երեւելիները, հանգուցեալ Առաստֆեան Պօղոս պէկի, Եղիազարեան մահտեսի Ալեքսան աղայի և Խաչերեան մահտեսի Սիբայէլ աղայի յատուկ մէկ նամակաւ (գրուեալ ի 1 յունուարի 1839) կը խնդրեն Պօղոս Պատրիարքէն, որ շնորհք ընէ նորոս եպիսկոպոսութեան համար իւր հաճութիւնը և վկայագիրը խրկելու, սոյն պայմանաւ՝ որ եպիսկոպոսութիւնը ընդունելէն յետոյ կրկին Ագիպտոս դառնայ, “առ ի վայելել, ինչպէս կը գրեն նամակին մէջ, յերեխայրից պրտոյ իւրոցն աշխատանայ, այն է օծել զեկեղեցին” ։ Պօղոս Պատրիարքը եւ իւր խորհրդական սուրբ Հարք Ագիպտոսի բարեսէր ու բարեպաշտ ժողովրդոց, մանաւանդ մեծանուն և իշ-

խանաւոր Պօղոս պէկի խնդիրքը սի-
րով ընդունելով՝ անմիջապէս վիպա-
գիրը կը խրկեն Վարրիէլ վարդապե-
տին, որ քիչ ժամանակէն ի Սիւ եր-
թալով յունիսի 15 երորդ օրը ի Տէր
հանգուցեալ Սիբայէլ Վաթաղիկոսէն
կ'ընդունի Նպիսկոպոսութեան բարձ-
րագոյն աստիճանը, և կրկին Նշգիւ-
տառ դառնալով՝ ժողովրդեան հոգե-
ւոր փափաքը կը կատարէ նորաշէն ե-
կեղեցին օծելով:

Նոր ժամանակ սկսած էր Նշգիւ-
տառի ազգայնաց մէջ ուսումնասիրու-
թեան նոր եռանդ մի արծարծիլ, կար-
գաւորեալ դպրատանց հաստատութե-
փոյթ տանիլ, և որովհետեւ այսպիսի
ձեռնարկութիւններ բաւական ատակի
կարօտ էին, չուզելով Ս. Նթուոյս
սեփականութեցը վնասել, որոնց ար-
դիւնքը սահմանուած էր միաբանու-
թեան պիտոյիցը համար Նշգիւտոս
գտնուած բերքերէն գնելու, փասն
որոյ սկսան այն ժամանակէն յատուկ
սեփականութեան աէր բլալ, եկեղեց-
ւոյ վախճաններ գոյացրնել, օրէ օր ա-
ւելցրնել, և անոնցմէ եղած արդիւն-
քը թէ՛ եկեղեցւոյ, թէ՛ դպրատանց
և թէ՛ ուրիշ ազգային հարկաւոր սի-
ւոյից տնօրինել, որոնց համար յատուկ
արձանագրեր ու հաշուէտու մարներ
հաստատուեցան առանց խառնելու Ս.
Նթուոյս սեփականութեց արդեանց
և ծախսուց տու մարներուն հետ, ինչ-
պէս է մինչեւ ցայսօր: Նշգիւտին երե-
ւելիները այն ժամանակէն սկսեալ մին-
չեւ ցայսօր մեծ փոյթ ու խնամք ու-
նեցած են Նշգիւտոսի ազգային կալ-
ուածոց արդիւնքը շապցրնելու և Ս.
Նթուոյս օգնութեանը կարօտ չմնա-
լու համար՝ վախճանները աւելցրնել
չնորհիւ բարեխնամ կառավարութե-
Նշգիւտոսի, որ ժամանակ առ ժամա-
նակ մշակուելու բաւական երկիրներ

դարգեւած է, որոնց արդիւնքովը կըր-
նայ ոչ մէկ այլ երկու և երեք դրու-
րոցներ կառավարուիլ խոհական տըն-
տեսութեամբ, և յուսացուածէն ա-
ւելի յառաջադիմութիւններ ձեռք բե-
րել, ապա թէ ոչ սուրբ Նթուոյս ու-
նեցած արդիւնքն ալ նոյն ճամբուն
ծախս ըլլաւելու ըլլայ, դարձեալ քիչ
է, և դարձեալ մի եւ նոյն վիճակին
մէջ կը մնայ ժողովուրդը:

Վարրիէլ եպիսկոպոսն իւր հայրա-
կան խնամատարութեամբը բոլոր ժո-
ղովորդին սիրելի ըլլալով՝ իւր խօսքը
միշտ անոնց քով աղդեցութիւն գտած
էր, և անոնց այս օրինակ ուսումնա-
սէր և աղգասէր ճգանքը մեծապէս
ձեռնտու եղած էր: Իւր անոյշ և զիւ-
ջող բնաւորութեամբը Պօղոս պէկի
և ուրիշ երեւելի ազգայնաց համա-
կրութիւնը ստանալէն ի զատ, սիրելի
էր նաեւ տեղական կառավարութե-
աչ քին և շատ արտօնութիւններ և շը-
նորհքներ անկէ վայելած: Նշգիւտ
իւր ծերութեան վերջին տարիները
նոյն սէրն ու համակրութիւնը գտաւ
նաեւ Վսեմափայլ և ազնուածնունդ
Նշգիւտ փաշայէն, որու աշխարհա-
ծանօթ աղգասիրութեան խնամքը ոչ
միայն եղիպատաբնակ ժողովուրդը, այլ
և գրեթէ ընդհանուր աղդը կը վայե-
լէ. նոյն աղգասէր և ջերմեռանդ ըլ-
գացմունքները յոյս ունի և սուրբ Ն-
թուոս վայելելու Նորին Վսեմութե-
նէն, որուն արդէն կը նուիրէ միաբա-
նական Վստոյ ջերմ բարեմաղթութի-
ւներ և բաղմոսգատիկ հասուցմունք ի
Տեառնէ իւր բարենպաստակ առասա-
ձեռնութեանցը:

Վր վերջացրնեմք խօսքերնիս՝ խըն-
դրելով յաւիտենական հանգիստ հոգ-
ւոյ հանգուցեալ Սրբազան Հօր, և
արժանաւոր յաջորդ մի ի միսիթարու-
թիւն իւր որբացեալ սիրելի ժողովր-

դոյ Լիզիպտոսի և Լիզեքսանդրիոյ :

— Լիզիպտոս 30 ին աշխարհամատարան կիւրակէին սուրբ Լիթուս սուրբութի ունի հանդիսաւոր պատարագ մատուցանել կենատուտ սուրբ Գերեզմանին վերայ, ինչպէս և Օլատիկ ութօրէից կիւրակին եւս յոյնք կը պատարագեն հանդիսասպէս : Սոյն առթիւ Սրբազան Պատրիարք Հայրը յառանգաւորաց դպրոցի 10 աշակերտաց դպրութեան ատտիճան տուաւ սուրբ Գերեզմանին դիմաց : Սուրբ Լիթուս սուրբութիւն ունի այսպիսի կարգեր ու ձեռնագրութիւններ սուրբ Յակոբայ մայր եկեղեցւոյ մէջ կատարելու : Իսկ Լատինք և Յոյնք իրենց մասնաւոր եկեղեցեաց փոքրութեանը պատճառաւ սովոր են միշտ սուրբ Գերեզմանին դիմացը կատարել : Յայտնի է ազգայնոց որ այսպիսի արարողութիւնները կատարելը որ և է սուրբ տեղւոյ մի վերայ՝ իրաւունք կը համարուի :

— Սուրբ Օլատէն ՚ի վեր է սուրբ Լիթուոյս նորաշէն զեղարանը բացուելով յանձնուեցաւ Բիթմապճեան արժանայարգ Պ. Սահակին, որ յատուկ բժշկութեան համար բերուեցաւ Պօլիսէն, և առ այժմ՝ գեղադործութիւն ալ պիտի կատարէ մինչեւ աշակերտ մի հասցընելը, որ արդէն քաղաքացի հայ տղայ մի տրուեցաւ իրեն աշակերտութեւ : Սիբանութիւնս խիստ դոճ է յիշեալ բժշկին քաղցր բնաւորութենէն և իւր կրկին արհեստին մէջ ունեցած հմտութիւններէն :

— Յիշուսալէմ քննութեան համար եկող թէֆթիշի Վսեմ, Խորա հիմ փաշայն ամսոյս երեքին մեռաւ թեթեւ հիւանդութենէ մի յետոյ, որոյ համար կ'ըսուի թէ եկած ժամանակ եւս տկարութիւն ունէր :

ՆՈՒՒՐԱՏՈՒՔ

Սուրբ Լիթուոյս թանգարանի վերատեսչութիւնը պարտք կը համարի հրապարակաւ իւր շնորհակալութիւնը մատուցանելոյ հետագայ բարեւեր ազգայնոց, որոնք յօժարեցան իրենց քով գտնուած թէ՛ հնութիւններ և թէ՛ ձեռագիր մատենաները թանգարանիս նուիրելու, որոնց անուանքը առ ի յիշատակ յաւիտենական կ'արձանագրեմք ամսաթերթիս մէջ :

Գեր. Լիզեքսոս Սրբազան արքեպիսկոպոսը Վեհապետեան շնորհեց Լիթիքաղաքին հնութիւններէն մնացորդ չորս կտոր քանդակուած քարինք, ազույեալ քառակուսի ընկուզի փայտէ փարպետաշէն պատուանդանի վերայ :

Թէքիրտաղաւ Լաաջնորդ Գերա. Թադէոս սրբազան արքեպիսկոպոսը նուիրեց երկու կտոր գիրք հին նօտրադիժ տառերով. առաջինը կը պարունակէ քարոզք ու զանազան նիւթեր : Իսկ երկրորդը անթիւ և անհամար և ամեն ազգի նիւթերու վերայ կը խօսի (Miscellanées) այսինքն խմատասիրական, աստուածաբանական, բարականական, բնական, բժշկական, բարոյական, ձայնական, գողտնաբանական, մեկնական, հայկական խաղերու, եւայլն եւայլն. նօտրադիժ՝ ամենամանր տառերով հօծ և խիտ գրուած բամբակեայ նուրբ թղթի վերայ. կը պարունակէ 1063 էջ :

Տէր Գատարեան զմիւռնայի մեծայարգ Պ. Կոստանը նուիրեց թուլմայի ազու ինացւոյ Հոգեաց և Հրեշտակաց բառած գիրքը, նօտրադիժ մայրուր, անթուական :

Լիզեքսիոյ Լիքնանկար սուրբ Լստուածածնի եկեղեցին՝ նուիրեց նոյն եկեղեցւոյ լուսարար Պարեան Տ. Սար